

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԵՆՏՐԱՆԱԾԻԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ

Մանկավարժական ինստիտուտների աշխարհագրական
ճակույթների համար



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

A 23125

1870

1870

59 (021.1)

ԱՏՈՒԳՎԱՐԺ Է 1931 թ.

Ծ Ր Ա Գ Ի Ր


ԿԵՆՌԱՆԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ

ԿԵՆՌԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ

Մանկավարժական ինստիտուտների աշխարհագրական
ճակույթների համար

ԹԵՏ



Թարգ. յեկ հմբ. Մ. ԶԱՌԱՖՅԱՆ

Տեխ. խմբ. Խ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Սրբագրիչ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գրավիտի լիազոր՝ Յ.—3694 Պատվեր № 280, Տիրած 400

Հանձնված է արտադրության 1 հոկտեմբերի 1938 թ.

Մտորագրված է տպագրելու 31 հոկտեմբերի 1938 թ.

Դրանկալարժեական Ինստիտուտի տպարան, Մարջսի վող. № 17, Յերևան

Հաստատված է
Խ Ս. Հ. Մ-ի թիկն-ին կից
Քարձրագույն դպրոցի գործերի համա-
միութենական կոմիտեյի կողմից
26-հուլիսի 1938թ.

Խ. Ս. Հ. Մ.-ի
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑԻ
ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒ-
ԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԿԵՆԴԱՆԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻ- ՄՈՒՆՔՆԵՐՈՎ»

Մտնկավարժական ինստիտուտների աշխարհագրական ֆակուլտետների համար
1. ԹԵՄԱ—ԿԵՆԴԱՆԻՆ ՅԵՎ ԼԱՆԴՇԱՅՏԸ

Կենդանաբանության ուսումնասիրության նշանակությունը աշխարհագրագետների համար: Էանդաֆտային կենդանիներ (Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի սմբակավորները, Արկտիկայի, Անտարկտիկայի և Հարավային Աֆրիկայի թռչնաբազարները, փոկերի խաթարումը (залежки), կրծողների լանդաֆտային դադութները, լճային և գելտային թռչունները և այլն): Կենդանիների դերը հողագործության մեջ (հողային անվողնաշարավորները, փորող կաթնասուններ): Բուսականության կախումը կենդանական աշխարհից (տրորելը և արածելը, հողի փոխվելուց և կախված բուսականության փոխվելը: Փոշոտում, սերմերի անդամփոխություն և այլն): Կենդանիների նշանակությունը հողի լվացման և ցիրուցանման մեջ: Կենդանիների մնացորդներից բաղկացած լուսնատեսակները: Հնեաբանությունը և պատմական յերկրաբանություն: Կենդանական աշխարհը, վորպես մի յերկրի բնորոշ գիծը: Կենդանաշխարհագրությունը վորպես աշխարհագրական գիտություն:

2. Թ Ե Մ Ա—ԴԱՐՎԻՆԻԶՄԸ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԱՇԽԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դարվիների ուսմունքը փոփոխականության մասին: Արհեստական ընտրություն: Կենդանիների բազմացման արագությունը և գոյության կռիվ: Բնական ընտրություն: Նպատականաբար հարմարված հատկանիշների ամրացումը գոյության կռիվ և բնական ընտրության շնորհիվ: Հատկանիշների խոտորում: Կոնվերգենցիա: Եվոլյուցիայի կենդանաշխարհագրական ապացույցները և տեսակների առաջացման աշխարհագրական ֆակտորները: Կենդանաշխարհագրության կապը գարվիներով հետ:

3. Թ Ե Մ Ա—ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կենդանաբանական կարգաբանության սկզբունքները: Լիննեյը, վորպես կենդանաբանական սխտեմի հիմնադիր: Կենդանական աշխարհի բաշխման սքեման: Հասկացողություն տեսակի և յենթատեսակի մասին, աշխարհագրական փոփոխականություն: Յենթատեսակների ուսումնասիրության նշանակությունը եվոլյուցիան հասկանալու համար:

4. Թ Ե Մ Ա—ԱՆՎՈՂՆԱՇԱՐԱՎՈՐՆԵՐԻ ՏԻՊԱՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐՈՏ ԱԿՆԱՐԿ

Նախակենդանիների ընդհանուր տեսություն: Մի քանի բնորոշ ներկայացուցիչներ (պարսպիտները, քաղցրահամ ջրերի և ծովային կենդանիներն ու նրանց նշանակությունը կենդանաշխարհագրության մեջ): Մպունգների տիպարի ընդհանուր բնութագիրը: Ադելսորդավորների տիպարը: Ադելսորդավորների կարգաբանությունը: Ծովային և քաղցրահամ ջրերի ադելսորդավորները: Առանձին դասերը և նրանց աչքի ընկնող առանձնահատկությունները: Անհատական դարգացման նշանակությունը տարածման խնդրում: Կորալյան պոլիպները և նրանց դերը կորալյան սիֆերի գոյացման մեջ: Կորալյան ռիֆերի զանազան ձևերը: Կորալների աշխարհագրական տարածումը: Հին բրածո կորալներ:

Վորդերի ընդհանուր բնութագիրը: Ծովային և քաղցրահամ ջրերի ներկայացուցիչները: Վորդանմանների տիպարը:

Մամուլորդերը, ուսալոտնիերը և նրանց նշանակութիւնը, վորպէս բրածոների տաշնորդողներ: Կակղամարմինների տիպարի ընդհանուր բնութագիրը: Նրանց կարգաբանութիւնը: Ցածաքային խխունջների նշանակութիւնը կենդանաշխարհագրութեան համար:

Հողվածոտանիների ընդհանուր տեսութիւնը և նրանց կազմութեան բնորոշ գծերը: Խեցգետնանմանների բնութագիրը և նրանց կենսաբանական առանձնահատկութիւնները: Մերոստոմների դասը: Սրագիրների կառուցվածքը, զարգացումը և աշխարհագրական տարածումը: Մեւսած սրագիրներ և ըրածո վահանակիրներ: Սարգանմանների բնութագիրը (կենսաբանական և ձևաբանական): Սարգանմանների նշանակութիւնը կենդանաշխարհագրութեան համար: Միջատների կենսաբանական և մարֆոլոգիական բնութագիրը և համառոտ տեսութիւնը նրանց առանձին կարգերի մասին: Միջատների բազմազան ձևերի առատութեան կախումը ցամաքի կյանքի բազմազան պայմաններից: Միջատների գերը բնութեան մեջ (բույսերի փոշոտումը, մի քանի միջատների կողմից բույսերի վոչնչացումը, նեխող նյութերի վոչնչացումը, միջատների նշանակութիւնը, վորպէս սննդի միջոց զանազան անվողնավոր և վողնավոր կենդանիների համար): Միջատների նշանակութիւնը մարդու համար (զրական և բացասական):

Փշամորթների տիպարի բնութագիրը: Փշամորթների դասերը և նրանց կենսաբանական առանձնահատկութիւնները: Ընդհանուր տեսութիւնը անվողնավորների ֆիլոգենետիկ կապի և կվոլյուցիայի մասին:

Ե. Յ Ե Մ Ա—ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԼԱՐԱՎՈՐՆԵՐԻ (ԽՈՐԴԱՎՈՐ) ՏԻՊԱՐԻ ՅԵՎ ԲՈԼՈՐԱԲԵՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԻ ՄԱՍԻՆ

Լարավորների տիպարի ընդհանուր բնութագիրը: Նրանց կառուցման միասնական պլանը: Զրային և ցամաքային ձևերի որգանների հիմնական սիստեմները (համակարգերը): Լարավորների տիպարի կարգաբանութիւնը: Գնազավորների յնութատիպարը և նրա բաշխումը դասերի: Բոլորաբերանների դասի բնութագիրը: Մինոգներ: Միկսիներ: Բոլորաբերանները, վորպէս հնազույն խմբերի մնացորդներ:

Ձկները ընդհանուր բնութագիրը: Ձկների կազմութեան կապը ջրային միջավայրի հետ: Ծածկութիւնը: Կմախքի կազմութեան սկզբունքները: Զգայարանները և նրանց պատշաճ առանձնահատկութիւնները: Ծնշառութեան օրգանները և լողափամփուռը: Ձկների տիպաբանական կենսաբանական տիպերն ու նրանց կազմութեանը: Ծովային ձկները և նրանց կենսաբանական խմբերը: Խորքահատակային ձկներ, նրանց կազմութեանը և կենսաբանական առանձնահատկութեանները: Գրունտի նշանակութեանը լիտորալ ձկների համար: Պելագիալ ձկներ: Արիստալ ձկների առանձնահատկութեանները, նրանց կենսաբանութեանը և կազմութեանը: Ձկների չուն (միգրացիան): Անցվոր, կիսանցվոր և քաղցրահամ ջրերի ձկներ: Բազմացումը և նրա հետ կապված կենսաբանական առանձնահատկութեանները: Ձկների կերակուրը և սննդառութեան միջոցները: Ձկների ծագումը և նրանց եվոլյուցիան: Իսաի հարստութեանը տեսակներով և նրա նշանակութեանը բնութեան մեջ: Ձկների կարգաբանութեանը:

I ՅԵՆԹԱԴԱՍ, ԿՌՃԻԿԱՅԻՆ ԶԿՆԵՐ

Յենթադասի բնութագիրը և նրա բաժանումը կարգերի, ճնածկները վորպես պելագիալ գիշատիչներ: Պրոգրեսիվ հատկանիշները (բազմացման և ուրիշ), տեսակների առատութեանը, հնութեանը: Կատվածկներ, նրանց կազմութեանը և կենսաբանութեանը, վորպես հատակային ձկներ: Քիմեռները, վորպես հնագույն արիստալ ձկներ:

II ՅԵՆԹԱԴԱՍ, ԿՐԿՆԱՇՈՒՆՉ ԶԿՆԵՐ

Յենթադասի գլխավոր հատկանիշները (պրիմիտիվ գծերը, թոքերը և արյան շրջանառութեան համակարգի առանձնահատկութեանները): Կենսաբանութեան առանձնահատկութեանները, ցամաքած ջրավազանների կյանքը, թոքային շնշառութեան նշանակութեանը, պարբերական քունը և ուրիշները: Հին բրածո ձկներ: Տերատոզուսը, պրոտոպտերուս և լեպիտոսիրենն ու նրանց ժամանակակից աշխարհագրական տարածումը:

Յենթադասի բնութագիրը:

Կարգ 1. Ոստի տրանսմաններ: Կարգի գլխավորագույն հատկանիշները: Ոստերանման ձկների դանազան տեսակները և նրանց մարմնի կազմութունը: Աշխարհագրական տարածումը (մասնավորապես լաստավորների և բաղմատամանիների): Ոստերինների արդյունագործական նշանակությունը: Ոստերանմանների եվոլյուցիան և նրանց տարածումը յերկրաբանական անցյալում:

Կարգ 2. Վրձնալճոդակավորներ: Բաղմատոդակը (պոլիպտերուս) վորպես վրձնալճոդակավորների զբաղմատոդակներից ցաղ-նախահայրի ժամանակակից ներկայացուցիչը: Կազմության բնորոշ գծերը: Շնչառության որգանները: Տարածումը: Կայմանային ձկների և ամիանների կարգերը, փորպես միջակա խմբեր դեպի վոսկրավոր ձկները:

Կարգ 3. Վոսկրավորներ: Կարգի բնորոշ հատկանիշները: Վոսկրավոր ձկների գլխավոր խմբերը (լոտոսներ, սելդեր, ոճա-ձկներ, լուսին-ձուկ, ծածաններ, ձիաձկներ, փրփրուկներ, յեզնակներ, կամբալաներ և ձողաձկներ), կազմության կարևորագույն առանձնահատկութունները, կենսակերպը, աշխարհագրական տարածումը և արդյունագործական նշանակությունը: Ձկների բաղմատգանությունը և վոսկրավոր ձկների հարստությունը ներկայումս և նրանց եվոլյուցիան:

7. ԹԵՄԱ—ՅԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐԻ ԴԱՍԸ

Դասի ընդհանուր բնութագիրը: Յերկկենցաղների կազմությունն ու զարգացումը, փորպես միջանցիկ խումբ ջրային և ցամաքային վորդնավորների: Մաշկը և նրա կենսաբանական նշանակությունը (շնչառությունը, զեպի աղերն ունեցած հարաբերությունը, թունավոր գեղձերը): Կենսաբանական տիպերը (ջրային, ցամաքային, փորոդներ, մազլցոդներ և ուրիշները): Նրանց մորֆոլոգիական առանձնահատկութունները (մարմնի ձևը, գույնը): Յերկկենցաղների սննդառությունը: Բաղմատոդակը: Ձվիկները և գոնդոդային թաղանթի նշանակությունը: Մետամորֆոզ (կերպարանափոխություն): Սերնդի խնամքը (հոգատարությունը): Թերազարգացման յերևույթներ (նեոտենիա): Ռե-

զեներացիա: Յերկկենցաղների աշխարհագրական տարածումը, ուզի խոնավության, բարեխոսնության և զեպի ծովի ջուրն ունեցած հարսբերության կապակցությամբ: Յերկկենցաղների եվուլյուցիան և զբանակիք յերկկենցաղները: Ժամանակակից յերկկենցաղների կարգաբանությունը, այս գրուպայի համեմատական աղբատությունը տեսակներով:

ՅԵՆԹԱԴԱՍ ԱՆՁՐԱՀԱԿԻՐՆԵՐ

Կարգ 1. Անվոտներ: Մորֆոլոգիական և կենսաբանական բնութագիրը: Շուրջ-տրոպիկական տարածումը:

Կարգ 2. Պոչավորներ: Մորֆոլոգիական և կենսաբանական բնութագիրը: Պրոտեուսը, վորպես այրի բնակիչ: Հակա սալամանդը, սիրենան, ամֆիուսը, վորպես ջրային ձկեր: Աշխարհագրական տարածման առանձնահատկությունները:

Կարգ 3. Անպոչներ: Մորֆոլոգիական և կենսաբանական բնութագիրը: Լեզվազուրկների տարածման առանձնահատկությունները: Անտառաբնակ ձկերի առատությունը տրոպիկական մարզերի անտառներում:

8. ԹԵՄԱ—ՍՈՂՈՒՆՆԵՐԻՊԱՍԸ

Ամբիոտներ (բարձր կարգի վողնավորներ, վորոնք ունեն սաղմնային թաղանթ) բնութագիրը (կենսաբանական և մորֆոլոգիական առանձնահատկությունները): Դասի ընդհանուր բնութագիրը: Մաշկը: Ծածկույթները և նրանց նշանակությունը սողունների կենսաբանության մեջ: Սողունների կմախքի կազմության առանձնահատկությունները, վորպես տիպիկ հատկանիշ ցամաքային կենդանիների: Սողունների սիստեմատիկ խմբերը և նրանց մորֆոլոգիական և կենսաբանական բնութագիրը:

Սողունների ծագումն ու եվուլյուցիան: Բրածո սողունների հիմնական խմբերը: Ժամանակակից սողունների աշխարհագրական տարածումը կլիմայական և ուրիշ ֆիզիկական պայմանների կապակցությամբ:

ՅԵՆԹԱԴԱՍ I. ԿՏՅԱԳԼՈՒԽՆԵՐ (Rynchocephales)

Հատտերիան, վորպես միակ ժամանակակից ներկայացուցիչը այդ հին յենթադասի: Կազմության պրիմիտիվ առանձնահատ-

կությունները: Աշխարհագրական. տարածումը մեկուսացած
ժարգում, վորպես պատճառ հատանրիայի պահպանման:

ՅԵՆԹԱԴԱՍ II. ԹԵՓԱՎՈՐՆԵՐ

Յենթադասի ընդհանուր բնութագիրը: Ձևերի հարստությունը
և բաղմազանությունը:

Կարգ 1. Մողեսներ

Ընդհանուր բնութագիրը: Մողեսների կենսաբանական տի-
պերը (անապատային, անտառային, լեռնային և ուրիշները):
Գեկկոները և սցինկաները վորպես լայն տարածված ձևեր: Բաղ-
մացումը:

Կարգ 2. Քամելիոններ

Մարմնի կազմության առանձնահատկությունները ծառա-
յին կենսակերպի կապակցությամբ: Աշխարհագրական տարա-
ծումը:

Կարգ 3. Ոձեր

Կազմության առանձնահատկությունները համեմատած մո-
ղեսների հետ՝ բնորոշ շարժումների և սննդառության կապակցու-
թյամբ: Թունավոր գեղձեր և ատամներ: Ոձերի կենսաբանական
տիպերը:

ՅԵՆԹԱԴԱՍ III. ԿՈԿՈՐԴԻԼՈՍՆԵՐ

Կոկորդիլոսների բնութագրությունը, վորպես բարձր կազմա-
կերպված ջրային սողուններ: Ծագումը և աշխարհագրական տա-
րածումը:

ՅԵՆԹԱԴԱՍ IV. ԿՐԻԱՆԵՐ

Յենթադասի բնութագրությունը (պատյան, վերջավորու-
թյունների գոտիները և այլն): Կրիաների կենսաբանական հիմ-
նական տիպերը և նրանց աշխարհագրական տարածումը:

Թուշուհները մորֆոլոգիկ հենսաբանական հիմնական գծերը: Տաքարյունությունը, թուշելու ընդունակությունը, բարձր նյութափոխանակությունը: Ծածկույթը, կմախքը և հիմնական մուսկուլատուրան թուշելու հարմարանքի տեսակետից: Մարսողության որդանները, շնչառության, արյան շրջանառության և միզա-սեռային համակարգները և նրանց գործառնության տոանձնահատկությունները: Գլխի ուղեղի և զգայարանների պրոգրեսիվ գծերը: Թուշուհների հիմնական կենսաբանական տիպերը տեղաշարժման առանձնահատկությունների տեսակետից և լանդշաֆտի կապակցությամբ: Թուշուհների սննդառությունը, մորֆոլոգիական և կենսաբանական հարմարանքները, նշանակությունը բնության եկոնոմիկայում և մարդու տնտեսության մեջ: Թուշուհների բազմացման կենսաբանությունը: Բնակավման տերիտորիայի թիրիխի և բնակավայրի ընտրության պահպանողականությունը: Լուսյի աղեցությունը սեռագեղձերի (գոնադա) վրա, վորպես ֆակտորներից մեկը թուշուհների տարածման և չվելու ստիմուլներին:

Թուշուհների չուն և նրա առաջացման պատմությունը ժամանակակից և անցյալ կլիմայական պատճառների կապակցությամբ: Թուշուհների ձմեռելու գլխավոր տեղերը հյուսիսային կլիմագնդում: Թուշուհների ողակապատելը: Թուշուհների եվոլյուցիան՝ թուշելու ընդունակություն ձևոք բերելու կապակցությամբ:

ՅԵՆԹԱԴԱՍ I. ՏԱՓԱԿԱԿՈՒՐԾՔՆԵՐ

Ժամանակակից և բրածո տեսակները: Նրանց բնորոշ առանձնահատկությունները և աշխարհագրական տարածումը՝ թրուշելու ընդունակության բացակայության կապակցությամբ:

ՅԵՆԹԱԴԱՍ II. ՊԻՆԳՎԻՆՆԵՐ

Նրանց կազմության առանձնահատկությունները Չրային կենսակերպի կապակցությամբ: Աշխարհագրական տարածումը:

Յենթադասի բնորոշ առանձնահատկությունները: Նրանց ձևերի առատությունն ու բազմազանությունը: Գլխավոր կարգերը (սուզահավեր, թիավոտավորներ, տառեղներ, սասփակակտուցներ, ցերեկային դիշատիչներ, հավաղգիներ, կացարներ, վորորներ, աղավնիներ, թութակներ, բուեր, փայտավորներ) և նրանց առանձնահատկությունները բնակավայրի տարբերության կապակցությամբ: Աղավնաղգիները, վորպես ամենաբազմաթիվ գրուպան և նրանց տեղը բնության կյանքում:

10. ԹԵՄԱ—ԿԱՅՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԸ

Կաթնասունների բնութագրությունը, վորպես տաքարյուններ, կենդանածիւններ և ամենաբարձր կազմակերպվածության վողնավորներ: Կաթնասունների հիմնական կենսաբանական տիպերը զանազան միջավայրերում ապրելու ընդունակության կապակցությամբ (ցամաքային, ջրային, զետնափոր, ծառաբնակ, թռչող): Ծածկույթը և նրա արտադրանքները: Կաթնասունների գեղձերը և նրանց կենսաբանական նշանակությունը: Զանազան կաթնասունների վերջավորությունների կազմությունը նրանց կենսակերպի կապակցությամբ: Ատամային համակարգը և նրա ֆունկցիոնալ նշանակությունը: Նյարդային համակարգը և զգայարանները: Կաթնասունների հարբերությունը գեպի կլիման, վորպես տաքարյուն կենդանիներ:

Կաթնասունների նշանակությունը բնության եկոնոմիկայում և մարդու տնտեսության մեջ: Կաթնասունների ծագումն ու եվոլուցիան հարմարվածության տեսակետից:

ՅԵՆԹԱԴԱՍ I. ՄԻԱՆՑՔԱՆԻՆԵՐ

Կարգ 1. Միանցքանիներ

Կազմության պրիմիտիվ առանձնահատկությունները: Յեխիդնա և բազակտուց, նրանց կենսաբանական մասնագիտացումը և նրանց աշխարհագրական տարածումը:

ՅԵՆԹԱԴԱՍ 2. ՊԱՐԿԱՎՈՐՆԵՐ

Նրանց կազմութեան բնորոշ առանձնահատկութիւնները և բաղմացման կենսաբանութիւնը: Պարկավորների աշխարհագրական տարածումը անցյալում և ներկայումս: Ավստրալիական պարկավորների բաղմացանութիւնը և նրանց պարալիելը ընկերքավորների զանազան գրուպաների հետ աշխարհագրական վիկարիատի կապակցութեամբ:

ՅԵՆԹԱԴԱՍ 3. ԸՆԿԵՐՔԱՎՈՐՆԵՐ

Ընկերքավորների կազմութեան ընդհանուր գծերը, վորպես ամենաբարձր կարգի կաթնասուններ համայնապարփակ տարածմամբ: Միջատակերները վորպես ընկերքավորների պրիմիտիվ-անցողիկ գրուպան: Աշխարհադրական տարածումը (ձեղքատումը, տանրեկ): Մաշկաթեքերը: Կազմութեան առանձնահատկութիւնները, վորպես հավաքատիպ կաթնասուններ: Նրանց տարածումը թռչելու ընդունակութեան կապակցութեամբ (ովկիանային կղզիները): Իսկական չղջիկների յենթակարգը: Նրանց տեսակների առատութիւնը տրոպիկներում: Մոզոսանմանները: Նրանց մարմնի կազմութիւնը մրջյուններով և տերմիտներով կերակրվելու կապակցութեամբ: Աշխարհադրական տարածումը: Ամերիկական թերատամանները: Մըջնակերներ, համրուկներ և դրահակիւրներ ու նրանց մարմնի կազմութիւնը կենսաբանական մասնագիտացման կապակցութեամբ: Համրաքայները և գլխատոզոնտները: Հարավային Ամերիկան, վորպես գրուպայի զարգացման ոջախ: Կրծողները: Ատամների սիստեմի առանձնահատկութիւնները սննդառութեան կապակցութեամբ: Ձկների զանազանակերպութիւնը, տեսակների քանակը, անհատների թիվը և նրա պարբերական տատանումը: կապը լանդշաֆտների հետ և լանդշաֆտի ներգործութիւնը: Կրծողները, վորպես գիշատիչների կերի բազա: Տնտեսական նշանակութիւնը (դրական և բացասական), համաճարակ հիվանդութիւնների տարածման նշանակութիւնը: Կարևորագույն ընտանիքները (նապաստակներ, սկյուռներ, առնետներ, կուղբեր, խողովկներ, ֆագարամկներ, սոններ, ջրախողբեր), նրանց կենսաբանութիւնը և կազմութիւնը: Գիշատիչներ: Հիմնական մորֆոլոգիական և կենսաբա

նական գծերը գիշատիչների աննշառության կապակցութեամբ
և վորս ձեռք բերելու միջոցների կապակցութեամբ: Գիշատիչնե-
րի ընտանիքները և նրանց առանձնահատկությունները:

Թիւ վոտա վորն երը, վորպես գիշատիչ կաթնասունների
ջրային գրուպա: Կենսաբանական առանձնահատկությունները,
տարածումը և արդյունագործական նշանակությունը: Փոկեր,
ճովացուլիւր, ծովակատուներ, նրանց միգրացիան և բազմացման
կենսաբանությունը:

Կետանման երը, վորպես ջրային միջավայրին ամենա-
հարմարված կաթնասունները: Ատամնավոր և անատամ կետեր,
նրանց կենսաբանությունը, տարածումը և արդյունագործական
նշանակությունը:

Դաման երը, վորպես աֆրիկական խումը փղերին ավե-
լի ազգակից: Աֆրիկական և հնդկական կնճիթավոր փղերը, վոր-
պես մնացորդ լայն տարածված բազմաթիւ գրուպաների: Մորֆո-
լոգո-կենսաբանական բնութագիրը: Մամոնտները և նրանց տեղը
սառցային եպոխայի լանդշաֆտում:

Միրեն երը (ծովակուլեր), վորպես ջրային խոտակեր
կաթնասուններ: Լեմանտինները, տյուզոնները, ծովակուլը, նրանց
կենսակերպը և տարածումը:

Զուգասմբակավորն երը ամենահարուստ և բազմա-
զան գրուպան ե սմբակավորների: Նրանց մորֆոլոգիական և
կենսաբանական բնութագրությունը: Ընտանիքները և նրանց
հիմնական մորֆոլոգիական առանձնահատկությունները:

Անդուգասմբակավորն երը: Բնորոշ հատկանիշները
(մասնավորապես վերջավորությունների կազմությունը): Տապիր
ները, վորպես պրիմիտիւ գրուպա կտրտված տարածումով: Ժա-
մանակակից ոնգեղջյուրները և նրանց տարածումը: Մազածածկ
ոնգեղջյուրը մամոնտի ժամանակակից, ձիերը վորպես սմբակա-
վորների ծայրահեղ մասնագիտացած գրուպա:

Փողտամն երը, նրանց սիստեմատիկ գրությունն ու
հարմարացումը մրջյուններով և տերմիտներով կերակրվելու հա-
մար:

Լեմուրն եր: Նրանց մարմնի կազմությունը, վորպես մի-

ջատակերները և կապիկները միջանկյալ գրուպա: Լեմուրների հին և ժամանակակից տարածումը և նրանց ռազիացիան Մադագասկարում

Կապիկները, նրանց բնութագրութունը և զիրքը մյուս կարգերի շարքում: Լայնաքիթ և նեղքիթ կապիկները և նրանց աշխարհագրական տարածումը: Կապիկների կենսաբանության ընդհանուր ահնարկ: Մարդանման կապիկներ, նրանց տարածումը և ծննդաբանական կապը մարդու հետ:

11. Յ Ե Մ Ա—ԿԵՆԴԱՆԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ԱՌԱՐԿԱՆ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ՊՍՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կենդանաշխարհագրության առարկան և խնդիրները: Կենդանաշխարհագրության կապը մյուս գիտությունների հետ, ասնավորապես ֆիզիքական աշխարհագրության հետ:

Կենդանաշխարհագրության նշանակութունը միջնակարգ դպրոցում ավանդելիս: Կենդանաշխարհագրության պատմությունը: Լիննեյի հայացքները: Բյուֆֆոնի, Յիմմերմանի հայացքները: Կենդանաշխարհագրագետները XIX դարի սկզբում: Կենդանաշխարհագրության ազդեցությունը Չ. Դարվինի կենդանական աշխարհի եվոլյուցիոն զարգացման իդեայի հղացման վրա: Սկզբնաբանական կենդանաշխարհագրական մարդերը: Ուոլթերի աշխատությունները և նրանց ազդեցությունը կենդանաշխարհագրության զարգացման վրա: Հեսսե-ի և Դալի աշխատությունները: Ռուսական աշխարհագրագետների շկոլան: Կենդանաշխարհագրության պատմական և եկոլոգիական ուղղությունը:

12. Յ Ե Մ Ա—ՄԻԶԱՎԱՑՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Բիոսֆերա: Կենդանիների տարածման վրա ազդող միջավայրի հիմնական ֆակտորները (բարեխառնություն, լույս, ջուր, խոնավություն), կենսաբանական ֆակտորները՝ մրցում, կերակուր և այլն: Հասկացողություն եվրիբիոտի և ստենոբիոտի մասին: Հասկացողություն բիոտոպի մասին: Որինակներ զանազան բիոտոպների (ջրային և ցամաքային): Հասկացողություն կենսաբանական թելերի և բիոցենոզի մասին: Բիոցենոզի տարբերությունը ծովում և ցամաքում: Միջավայրի առանձին ֆակտորների ազդեցությունը կենդանիների տարածման վրա:

13. Թ Մ Ա—ԾՈՎԻ ԵԿՈՆՈԳԻԱԿԱՆ ՄԱՐԶԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՖԱՌԻՆԱՆ

Ծովային ֆառենայի սխտեմատիկ կազմութիւնը: Ծովերում և ովկիանոսներում կենդանիների տարածման վրա ազդող եկոլոգիական ֆակտորները: Զրի ճնշումը, աղիութիւնը, բարեխառնութիւնը, գազերը, լուսավորութիւնը, ծովային հոսանքները: Ծովի բնական եկոլոգիական մարդերը (լիտորալ զոնա, պելագիալ զոնա, արխասալ զոնա): Լիտորալ բնատուր զոյութիւնի պայմանները: Գրունտի ազդեցութիւնը ֆառենայի կազմութիւնի վրա: Բնատուր ֆառենա և նրա առանձնահատկութիւնները: Զրմուռների թփուտների ֆառենան: Բարապատ գրունտի ֆառենան: Կորալյան ուփերի ֆառենան: Գոյացման և տարածման որինաչափութիւնները: Պելագիալ զոնայի կենդանիների զոյութիւնի պայմանները և նրա ֆառենան, Արխասալ զոնան և նրա կենդանիների զոյութիւնի պայմանները: Արխասալ ֆառենան: Արխասալ զոնայում հին ձկների առատութիւնը և այդ յերևոյթի պատճառները: Տեսակառաջացման պայմանները ծովում: Ծովի կենդանական աշխարհի ուսումնասիրութիւնի պայմանները:

14. Թ Ե Մ Ա—ԿԵՆՏԱՆԻՆԵՐԻ ԳՈՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՔԱՂՅՐԱՆԱՄ ԶՐԱՎԱԶԱՆՆԵՐՈՒՄ

Ֆառենայի կազմութիւնը: Բաղցրահամ ջրերի ֆառենայի կապը ծովայինի հետ: Ծովային ձկնի տեղափոխումը քաղցրահամ ջրավազաններում: Բաղցրահամ ջրավազանների բարեխառնութիւնը: Սառցածածկութի նշանակութիւնը: Զրի քիմիզմը, որդանական նյութերի և թթվածնի պարունակութիւնը: Հոսանքների նշանակութիւնը: Խորը լճերը և նրանց ֆառենան: Ծանծաղ և կանգնած ջրավազաններում կենդանիների զոյութիւնի պայմանները: Ժամանակավոր ջրավազաններ, Բաղցրահամ ջրերի կենդանիների եկոլոգիական համարժեքը և տեսակառաջացման պայմանները:

15. Թ Ե Մ Ա—ՅԱՄԱՔԱՅԻՆ ՖԱՌԻՆԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԱՌԱՋՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆառենայի կազմութիւնը, ծագումը և առանձնահատկութիւնը: Միջավայրի այն ֆակտորները, վորոնք բնորոշում են ցամաքային կենդանիների տարածումը (մասնավորապէս կլիմայի և բուսականութիւնի առանձնահատկութիւնները): Կենդանիների

տարածման զոնաները: Յամաքային ֆառնայի հիմնական եկոլո-
գիական տիպերը (անտառային, տափաստանային, անապատա-
յին, լեռնային և բելիստային): Յամաքային ֆառնայի բազմա-
զանությունը և նրա պատճառները:

16. Յ Ե Մ Ա—ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԻՋՈՆԵՐԸ ՅԵՎ ԲՆԱԿԱՆ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հասկացողություն արեալի մասին: Տեսակի տարածումը
արեալի ներսուծ: Արաաքին և ներքին նախադրյալները և արեալի
ընդարձակման ստիժուլները (զրդապատճառները) (զոյության
կռիվ և այլն): Մահմանափակների նշանակութունը կենդանի-
ների տարաբաշխման մեջ: Կենդանիների եկոլոգիական հատկու-
թյունները տարափոխման ընդունակության տեսակետից: Տա-
րափոխման ակտիվ և պասիվ միջոցները զանազան եկոլոգիական
պայմաններում: Ժամանակը և տարածութունը վորպես սահմա-
նափակիչ (արգելք, խոչընդոտ): Արմատանալու յերևույթը և բիո-
ցենոզի խոչընդոտը (մրցում): Տարափոխվող տեսակները (զրախ-
տապան, սերինոս, կուզ, նապաստակ, գետի խեցեգետին և ուրիշ-
ները): Մարդը վորպես կենդանիների տարափոխման ֆակտոր:
Մարդու ազդեցութունը լանդշաֆտի վրա և վորպես առանձին
տեսակների արեալների փոփոխման պատճառ: Արեալների
բնական և արհեստական կրճատումը: Կենդանիների անհետաց-
ման պատճառները: Հասկացողություն ուլիկաների մասին:
Նրանց պահպանման պատճառները (ապաստարան): Տարափոխ-
ման խոչընդոտների անկայունութունը: Տարափոխման ուղիները
և տարափոխման ոջախները (փոկեր, լեռնային վոչխարներ
(խոյ): Տեսակներ և գրուպաներ առաջանալու ոջախները: Ավ-
տոխտոններ և իմիգրանտներ: Ֆառնայի բազազրիչ տարրերը:
(Խ.Ս.Հ.Մ.-ի Յելլոպական մասը):

17 Յ Ե Մ Ա—ՈՒՍՄՈՒՆՔ ԱՐԵԱԼԻ ՄԱՍԻՆ

Արեալների մեծութունը և նրա վորոշիչ պատճառները:
Լայն և նեղ արեալներ: Ենդեմիզմ և նեղ արեալների ծագումը:
Նեոենդեմիզմ և պալեոենդեմիզմներ (հատտերիա, լեռնային հըն-

դուհավեր): Լա՛յն արեալներ և կոսմոպոլիտաններ: Կտրատված աօրեալները, վորպես միապաղաղի ծնունդ: Կտրատված արեալների տիպերը: Կտրատված արեալների առաջացման պատճառները (ծովային և ցամաքային):

Կամուրջների թեորիան և նրա քննադատությունը: Մայր ցամաքների կայունության թեորիան: Վեգեների թեորիան: Վաճառված ուղիկաների թեորիան և նրա զրահան կողմերը: Տարածված հետեանքով գոյացած ճեղքվածքները:

18. Թ Ե Մ Ա—ԿՂՋԻՆԵՐԻ ՅԵՎ ԱՅՐԵՐԻ ՖԱՈՒՆԱՆԵՐԸ

Կղզիների ֆաունաների հիմնական գծերը մեկուսացման կապակցությամբ: Կղզիների մակարդակը և տեսակների թիվը: Կղզիների ֆաունաների անլրիվությունը: Տեսակառաջացման հիմնական գծերը կղզիների վրա (ենզեմիզմ, ուղիկային ձևերի պահպանումը): Հարմարացման ազդիացիան, վորպես մեկուսացման հետեանք: Այրերի եկոլոգիական հիմնական առանձնահատկությունները և այրերի ֆաունաները: Ռեզիդաներ:


19. Թ Ե Մ Ա—ՄՈՎԵՐԻ ՅԵՎ ՈՎԿԻԱՆՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՁԵՐԸ

Մովի կենդանաշխարհագրական մարզեր սահմանելու սկզբունքները: Պելագիալ ֆաունայի հարաբերական միորինակությունը և լիտորալի բազմազանությունը: Տրոպիկական գոտին և մերձբևեռային ծովը և նրանց կենդանաշխարհագրական հիմնական առանձնահատկությունները (մասնավորապես յերկբեվեռայնություն): Մովերի և ովկիանների կենդանաշխարհագրական մարզերը և նրանց կապը բարեխառնության և հոսանքների հետ: Արկտիկական մարզը և նրա ֆաունայի բնույթը: Ատլանտական մարզը, Հնդկական-Սաղարղ ովկիանյան մարզը, Անտարկտիկական մարզը և նրանց ֆաունաները: Խ.Ս.Հ.Մ-ի ծովերի և ծովափների ֆաունիստական բնութագրությունը:

20. Թ Ե Մ Ա—ՑԱՄԱՔԻ ԿԵՆԴԱՆԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՁԵՐԸ

Կենդանաշխարհագրական ստորաբաժանումներ սահմանելու սկզբունքները և այն դժվարությունները, վորոնք կախված են կենսաբանական-եկոլոգիական դանապան սիտեմատիկական

Մը. կենդանաշխարհագրությունը



գրուպաների առանձնահատկություններէյ և տարափոխման տար-
 բեր ժամանակից: Մարդերը վորպես հարմարացման ուղիացիա-
 յի կենտրոն կաթնասունների խոշոր գրուպաների: Նոր-Ձեւան-
 դական մարզը, նրա լանդշաֆտները և ֆաունան, ժամանակա-
 կից ցամաքային ֆաունաների մեջ ամենապրիմիտիվը: Ձթնչոզ
 թռչունների առատությունը և այդ յերևույթի պատճառները:
 Նոր-Ձեւանդիայի բիոցենոզների անհազեցվածությունը և ոտա-
 րամուտ ձեերի թեթե ակկլիմատիզացիան: Այստրալիական մարզը,
 վորպես պարկավորների հարմարացման ուղիացիայի ոչխի
 ընկերքավորների, համարյա, լրիվ բացահայտության կապակցու-
 թյամբ: Յենթամարդերը, նրանց լանդշաֆտները և ֆաունաները:
 Պոլինեզյան մարզը և նրա առանձնահատկությունները, վորպես
 կղզիների ֆաունաների կոմպլեքս, վորը առաջացել է պատահական
 գաղթող և «թափառող» ձեերի միախմբումից: Հավայան կղզի-
 ների ֆաունայի առանձնահատկությունները: Նոտոգեա: Նեո-
 տրոպիկական մարզը—Նեոգեա:Նեոտրոպիկական ֆաունայի հարը-
 տությունն ու յուրահատկությունը տնտեսական և պատմական
 պատճառների կապակցությամբ: Յենթամարդերը, նրանց լանդ-
 շաֆտները և ֆաունաները: Մադագասկարյան մարզը, վորպես
 հնագույն յեթովպական ֆաունայի ապաստարան և կիսակապիկ-
 ների և տանրեկների ուղիացիայի ոչխի: Յեթովպական մարզը,
 նրա տիպիկ մայր-ցամաքային ֆաունան: Նմանություն Հնդկա-
 Մալայան մարզի ֆաունայի հետ և այդ յերևույթի բացատրու-
 թյունը: Յենթամարդերը, նրանց լանդշաֆտները և ֆաունաները,
 Հնդկա-Մալայան մարզը, նրա ֆաունայի ընդոշ հատկանիշները
 (բարձրակարգ գրուպաների ենդեմիկ տեսակների ազքատություն-
 նը և ձեերի հարստությունը), վոր պայմանավորված է տնտեսա-
 կան և պատմական պատճառների հետ: Յենթամարդերը, նրանց
 լանդշաֆտները և ֆաունաները: Հյուսիսային կիսագնդի տրոպի-
 կականից դուրս գտնված մասերի ֆաունաները և նրանց ա-
 ռանձնահատկությունները լանդշաֆտների և պատմության կապակ-
 ցությամբ (հյուսիսային մասերի ազքատությունը, զոնալ բաժա-
 նումը և ֆաունիստական նմանությունը և տարբերությունը հա-
 րավայինների հետ): Սաոցային գորաշրջանի նշանակությունը:
 Գոլոարկտիկայի, Պալեոարկտիկայի և Նեոարկտիկայի խնդիրը:
 Յենթամարդերը և լանդշաֆտային զոնաները: Արկտոգեա: Ան-
 տարկտիկա և նրա ֆաունան:

Յերկրագնդի հիմնական ֆաունանների փոխարարերու թյու-
նը ընդհանուր կենդանաշխարհագրական և պալեոգրաֆիկական
թեորիաների տեսակետից (կամուրջները թեորիան, մայր-ցա-
մաքների կայունության թեորիան, վիզենների, բելլիկանների, հար-
մարվածության ոտգիացիայի թեորիան):

21. ՅԵՄԱ—ԽՍՀՄ-Ի ՖԱՈՒՆԱՆ

Ռուս աշխարհագրագետների աշխատությունները: Պալլաս,
Միզգենզորֆ, Սելերցով, Մենզեր, Սուշկին և ուրիշները: Տուն-
դրայի կենդանական աշխարհը: Հարկոլ շերտի կենդանական աշխար-
հը, Նախայնիսեյան և Անդրյենիսեյան Միրբրի, կամչատկայի, Սա-
խալինի ֆաունաները: Խառն անտանների և Միության Յելրոպա-
կան մասի անտառատափատանային կենդանական աշխարհը: Յել-
րոպական-Ղաղախասանի տափատանային կենդանական աշ-
խարհը: Ղրիմի ֆաունան, Կովկասի ֆաունան, Միջին-Ասիայի ցած
հարթությունները կենդանական աշխարհը: Միջին-Ասիայի լեռ-
նային կենդանական աշխարհը: Մոնղոլո-Խաուբյան տափա-
տանների ֆաունան: Ամուրա-Ուսուրյան յերկրի ֆաունան:
ԽՍՀՄ-ի քաղցրահամ ջրերի ֆաունայի մասին ընդհանուր ակ-
նարկ (առավելապես ձկները): Բայկալի ֆաունայի առանձնա-
հատկությունները: ԽՍՀՄ-ի ֆաունան և սոցիալիստական
տնտեսությունը: ԽՍՀՄ-ի արդյունագործական ռաչոնացու-
մը: Խալվածորթ կենդանիներ, վայրի և վորսի արդյունագործու-
թյուն: Գաղանասպանդանոցային արդյունագործություն: Գյու-
ղատնտեսության վնասատուները և պայքար նրանց դեմ:
Գյուղատնտեսության ոգտակար կենդանիներ (միջատակեր
և գիշատիչ թռչուններ, ոգտակար գիշատիչ զագաններ) և նրանց
պահպանումը: Հիվանդություններ փոխանցող կենդանիներ և
պայքար նրանց դեմ: ԽՍՀՄ-ի ֆաունայի փոփոխումը պատ-
մական ժամանակում: Բնության պահպանման և ակլիմատի-
զացիայի խնդիրները սոցիալիստական տնտեսության մեջ:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

« Կենդանաշխարհագրություն, կենդանաբանու-
թյան հիմունքներով » կուրսի ծրագրի մասին մանկավարժա-
կան ինստիտուտների աշխարհագրական ֆակուլտետների համար:

Այս դասընթացն իրենից ներկայացնում է աշխարհագրա-
կան ֆակուլտետների ծրագրի միակ դասընթացը, վոր ուկնդիր-

ներին գաղափար և տալիս կենդանաբանութեան և կենդանիներէ աշխարհագրական տարածման մասին: Դրանով պետք և բացատրել կենդանաշխարհագրութեան ծրագրի մեջ կենդանաբանութեան ելեմենտներէ միացումը:

Դասընթացի կենդանաբանական մասն այնպէս և կազմած, վոր ուսանողն ստանց նշուելի ծանրաբեռնութեան կարողանա նրանից ստանալ այն բոլոր հիմնական փաստերը, վորոնք բացատրում և սահմանադժում են կենդանիներէ աշխարհագրական տարածումը: Դասընթացի կենդանաբանական մասի սահմանափակ ծավալի մեջ ուշադրութեան և դարձված միայն կենդանական այն գրուպաներէ վրա, վորոնք կենդանաշխարհագրութեան համար ավելի մեծ նշանակութեան ունեն: Կենդանաբանութեան սովորական դասընթացներէց տարբերվում և նրանով, վոր այստեղ նշուելը քննարկվում և վոչ թէ նկարագրական անատոմիայի տեսակետից, այլ ավայլ գրուպայի միջավայրի հետ ունեցած յուրահատուկ կապի տեսակետից: Անատոմիական նշուելն, այդպիսով, մեկնաբանվում և, վորպէս համապատասխան կենդանիներէ ֆունկցիոնալ-անատոմիական ընութագրութեան և եվոլյուցիոն լուսաբանութեամբ: Դասընթացի կենդանաբանութեան մասում առաջադրվում և դարվիլինիդի հիմունքներէ մեկնաբանութեանը, վորը միաժամանակ ներկայանում և կենդանաշխարհագրութեան մեկնաբանութեան հիմքը:

Դասընթացի կենդանաշխարհագրութեան մասը կազմված և կենդանաշխարհագրութեան մեջ ժամանակակից դիտական ուղղութեան և մանկավարժական մաքի խիստ համապատասխանութեամբ: Այդպիսով նրա մեջ տրվում և կենդանիներէ աշխարհագրական տարածման ուսումնասիրութեան մեջ տնտեսական և պատմական ուղղութեաններէ սինթեզը (համագրութեանը): Այսպիսի մոտեցումն իր անդրադարձումն և գտնում ինչպէս կենդանաշխարհագրութեան ընդհանուր սկզբունքներէ մեկնաբանութեան, այնպէս նաև ֆաունաներէ նկարագրութեան մեջ:

Դասընթացում անհրաժեշտ ուշադրութեան և դարձված ջրային որդանիզմներէ աշխարհագրական տարածման խնդիրներէ վրա և ծովային ու քաղցրահամ ջրերի ֆաունաներէ կենդանաշխարհագրական ընութագրման վրա: Ֆաունաները նկարա-

գրելիս հիմնական ուշադրութիւնը դարձված է վոչ թի Փորձա մոմենտների վրա (սահմաններ, ստորաբաժանումներ, կենդանի ներքի յերկար անվանացուցակներ և այլն), այլ դրսևլորելու այն հիմնական որինաչափութիւնները, վորոնք վորոշում են ավյալ Ֆաունայի կազմը, նրա զարգացումը և հարաբերութիւնը դեպի մյուս Ֆաունիստական կոմպլեքսները: Ընդհանուր բաժինը հասկացված է Ս.Ս.Հ.Մ-ի Ֆաունային և նրա տնտեսական նշանակութեանը:

Պրակտիկ պարապմունքների ընդհանուր դրվածքը՝ ուսանողներին հնարավորութիւն տալ կոնկրետ կերպով ծանոթանալու կենդանական աշխարհի ամենաբնորոշ ներկայացուցիչների հետ ընդհանրապէս, և Ս.Ս.Հ.Մ-ի՝ մասնավորապէս: Այդ պարապմունքները պետք է կատարել լաբորատոր աշխատանքների միջոցով (վորոշել և գեմոնստրացիա անել), եքսկուրսիաների միջոցով՝ կենդանաբանական թանգարանները և կենդանաբանական պարկերը և այլն:

ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱՐԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

1.	Թեմա.— Կենդանիները և լանդշաֆտը	2	Ժամ
2.	» Դարվիինիզմ և կենդանաշխարհագրութիւնը	4	»
3.	» Կենդանիների կարգաբանութեան մասին հիմնական հասկացողութիւնը	4	»
4.	» Անվողնաշարավորների տիպերի տեսութիւնը և համառոտ ակնարկ նրանց եվոլյուցիոն զարգացման մասին	16	»
5.	» Լարավորների տիպարի ընդհանուր տեսութիւնը և բոլորաբերանների դասը	2	»
6.	» Զկների դասը	8	»
7.	» Յերկկենցաղների դասը	5	»
8.	» Սողունների դասը	5	»
9.	» Թռչունների դասը	8	»
10.	» Կաթնասունների դասը	10	»
11.	» Կենդանաշխարհագրութեան առարկան, խնդիրները և պատմական զարգացումը	2	»

12.	Թեմա—Միջավայրի նշանակութիւնը կենդանիների տարածման մեջ	3	Ժամ
13.	» Մոլի եկոլոգիական մարդերը և նրանց ֆաունան	5	»
14.	» կենդանիների դոյության պայմանները քաղցրահամ ջրավազաններում	5	»
15.	» Ցամաքային ֆաունան և նրա առանձնահատկութիւնները	4	»
16.	» կենդանիների տարափոխման միջոցները և բնական խոչընդոտների նշանակութիւնը	8	»
17.	» Ուսուցում արեալի մասին	6	»
18.	» կղզիների և այրերի ֆաունաները	4	»
19.	» Մոլերի և ովկիտանների կենդանաշխարհագրական մարդերը	4	»
20.	» կենդանաշխարհագրական մարդերը և յենթամարդերը, նրանց ֆաունայի բնութագրութիւնը	12	»
21.	» Խ.Ս.Հ.Մ-ի ֆաունան	8	»
	Պրակտիկ պարապմունքներ և եքսկուրսիաներ	10	»

137 Ժամ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ ի մ ե ա կ պ ն .

1.—կենդանաբանության դասընթաց.

Курс зоологии под редакцией Б. С. Матвеева. Учпедгиз, 1935г.

2. В. Г. ГЕПТНЕР. Общая зоогеография, Москва, 1936г.

3. А. М. НИКОЛЬСКИЙ. Земля и мир животных.

4. А. ф. ШЕЛЛ. Общая биология. Част II, Медгиз, 1933г.

5. Н. А. БОБРИНСКИЙ. Խ. Ս. Հ. Մ-ի կենդանիներն ու բնութիւնը (տպագրվում է).

6. » » Конспективный курс зоогеографии (изд. Заочным сектором Моск. Госуд. Университ.)

7. Н. А. БОБРИНСКИЙ. Зоогеография и эволюция. Госиздат, 1927г.

190807812.

1. Д. Н. КАШКАРОВ и В. В. СТАНЧИНСКИЙ. Курс биологии позвоночных. Москва, Госиздат, 1929г.
2. В. ГААКЕ. Животный мир, его быт и среда. Издание Девриена.
3. А. БРЭМ. Жизнь животных. Перевод с последнего немецкого издания под ред. Кашпачева, 4-ое издание «Деятель», 1911—1918г.
4. В. КОБЕЛЬТ. Географическое распределение животных.
5. Р. Ф. ШАРФФ. Европейские животные. 1918г.
6. КЕЛЛЕР. Жизнь моря.
7. Л. С. БЕРГ. Природа СССР. Учпедгиз, 1937г.
8. П. В. СЕРЕБРОВСКИЙ. История животного мира СССР.



1918 г. 10-го декабря

ВНИМАТЕЛЬНО

СЛУШАЮЩИЙ

ПОСРЕДСТВОМ

1918 г. 10-го декабря

1918 г. 10-го декабря

1918 г. 10-го декабря

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004251

ԳԻՆԸ 25 Կ.

A ^{II}
23125

074.

11915

Пров. 1940г.

ПРОГРАММА

По курсу «Зоогеография с основами зоологии»
(для географических факультетов педагогических
институтов)

Изд. Педагогич. института, Ереван 1938

Арзв.